



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«16» 01 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 02

Ձեռնարկողը՝

<<Մեծ Մասրենի>> ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, Պողոսյան ավան

Գործունեությունը՝

**Գողթ համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր
հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն**
ՀՀ Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Ա. Սահակյան

Ա. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ *01*

«16» *01* 2018թ.

**ՀՀ Կոտայքի մարզի Գողթ համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր
հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն**

Ձեռնարկող՝ <<Մեծ Մասրենի>> ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Հիմնադրության փաստաթուղթ

«ՀՀ Կոտայքի մարզի Գողթ համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը՝ համատեղված համայնքի կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքների գոտևորման նախագծի հետ, մշակվել է «Մեծ Մասրենի» ՍՊԸ-ում, ՀՀ Կոտայքի մարզի Գողթ համայնքի պատվերով (Պայմանագիր N ՀՀ ԿՄԳԿ - ՊԸԱՇՁԲ-17/0 1):

Գողթ համայնքը գտնվում է Կոտայքի մարզի հարավային հատվածում, Գողթ գետի աջափնյակում, Աբովյանի տարածաշրջանում: Հեռավորությունը մարզկենտրոնից 68կմ հարավ-արևելք, Երևան քաղաքից 30կմ: Բնակավայրը գտնվում է ծովի մակարդակից 1500-1700մ. բարձր նիշի վրա: Համայնքի տարածքով անցնում է Ազատ գետը:

Գողթ համայնքում ներկայումս բնակվում է 2062 մարդ, հեռանկարում՝ 2270 մարդ:

Շրջանի կլիման չոր է և խիստ ցամաքային (ամռանը մինչև +38°C, իսկ ձմռանը -30°C): Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 480մմ: Ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 45սմ: Հողի սառցակալման առավելագույն խորությունը հասնում է 70սմ:

Բնակավայրի տարածքի կառուցապատումը ներկայացված է բնակելի կառուցապատմամբ, հասարակական սպասարկման օբյեկտների կենտրոնացած տեղակայմամբ:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 4753.33հա: Համայնքի հողերից 4419.85հա ներկայումս ունի գյուղատնտեսական նշանակություն, հեռանկարում կլինի 4369.95հա: Բնակավայրերի հողերը կազմում են 224.50հա, հեռանկարում՝ 255.07հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերը՝ 21.72հա, հեռանկարում՝ 18.89հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողերը՝ 29.38հա, հեռանկարում՝ 33.49հա, հատուկ նշանակություն ունեցող



տարածքների հողերը՝ 39.89հա, հեռանկարում՝ 57.94հա, ջրային հողեր՝ 17.99 հեռանկարում 17.99:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է այգեգործությամբ և հողագործությամբ, որոշ մասը՝ անասնապահությամբ: Վերջին 4-5 տարիների ընթացքում համայնքում ստեղծվել են ջերմատնային տնտեսություններ՝ որտեղ ընդհանուր հաշվարկով շուրջ 400-500 մարդ ունի մշտական զբաղվածություն:

Գողթ համայնքի բնակելի տարածքները նախատեսված են հիմնականում բնակելի կառուցապատման, դրանց ենթակառուցվածքների, հասարակական նշանակության օբյեկտների առաջնային տեղակայման համար: Բնակելի գոտիները իրականացված և նախատեսված են 800-1200ք.մ տնամերձ հողամասերով: Գողթ գյուղը հիմնականում կառուցապատված է 1-2 հարկանի քարե պատերով, ավանդական շարվածքով, ուղիղ շարվածքի տուֆ քարերով, թիթեղյա կամ ասբոշիֆերի ծածկ ունեցող տներով: Կառուցապատման գիծը, հիմնականում պահպանված է և սահմանված փողոցների կարմիր գծից մոտ 3մ հեռավորությամբ:

Գյուղի կենտրոնը ձևավորված է Երևան-Գեղարդավանք հանրապետական նշանակության ավտոճանապարհի աջակողմյան հատվածի տարածքում, որտեղ գտնվում են գյուղապետարանը, դպրոցը և համայնքի հասարակական կենտրոնը:

Բուժ ամբուլատորիան և կապի բաժանմունքը գտնվում են համայնքապետարանի շենքում: Համայնքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որը խթան է առաջացնում տուրիզմի զարգացմանը:

Գողթ համայնքի ջրամատակարարումն իրականացվում է երկու ջրաղբյուրներից՝ Գիլանլարի ձորի և Սպիտակասարի Յոթ աղբյուրներից: Գիլանլարի ձորի աղբյուրները գտնվում են գյուղի հարավ-արևելյան մասում, բնակելի հատվածից մոտ 12կմ հեռավորության վրա: Աղբյուրներից ջուրը տրվում է Փ150 պողպատե խողովակներով: Սպիտակասարի Յոթ աղբյուրները գտնվում են գյուղի հյուսիս-արևելյան մասում: Աղբյուրներից ջուրը տրվում է Փ125 պողպատե խողովակներով: Ջրաղբյուրներից սնվող ջրատարները բնակավայրի արևելյան մասում՝ բնակելի հատվածից 3.5կմ հեռավորության վրա, միանում են Փ150 պողպատե խողովակներով, ջրերը տրվում են դեպի օրվա կարգավորիչ ջրամբար, որից սնվում է բնակավայրի ջրամատակարարման բաշխիչ ցանցը: Ջրամատակարարման համակարգի տեխնիկապես վատ վիճակը, ջրատար խողովակների մաշվածությունը և քայքայվածությունը, այս ամենը բերում է մեծ հոսակորուստների:

Նախատեսվում է հեռանկարում՝ խմելու ջրագծերի վերակառուցում պոլիէթիլեն խողովակներով:

Ջրամատակարարման համակարգի կենտրոնացումը մեկ ջրատարով՝ կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջների իրականացման համար:

Ջրապահանջը հաշվարկելիս, որպես հիմք ընդունվել է գործող ՇՆԿԿ 2.04.02-84-8-ը: Բնակչության մեկ մարդու օրական ջրապահանջը հաշվարկային տարում ընդունվում է 200լ/օր:



Գողթ համայնքը չունի կոյուղու համակարգ և յուրաքանչյուրը անհատապես ինքն է լուծում իր խնդիրները: Հեռանկարում նախատեսվում է կենցաղային կոյուղու նոր ցանցերի կառուցում, որտեղ կոյուղաջրերը նախատեսվում է հեռացնել բնակավայրի հարավային հատված, որտեղ նախատեսվող մաքրման կայանում մաքրվելուց հետո կհեռացվի Ազատ գետ:

Ներկայումս Գողթ համայնքը հեղեղատար կոյուղի չունի: Անձրևաջրերը անկանոն ձևով առանց մաքրման հեռացվում են ըստ ռելիեֆի:

Համայնքի ռելեֆը հնարավորություն է տալիս հեղեղատար ջրերի ամբողջ ելքը հավաքել և մաքրելուց հետո հեռացնել դեպի Ազատ գետ:

Հեղեղատար կոյուղին պետք է ընդգրկի գյուղական համայնքի ամբողջ տարածքը և համայնքը շրջապատող ամբողջ ջրահավաք ավազանը: Կոյուղու ընդհանուր երկարությունը կկազմի 17.2կմ: Հեղեղատար ցանցերը կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով:

Հեղեղատար կոյուղու համար կարող են օգտագործվել կերամիկական, ե/բետոնե թուջե Փ200-500 խողովակներ և ե/բ կիսախողովակներ:

Գողթ գյուղի տնամերձ հողամասերի ոռոգումը իրականացվում է Ազատի ջրամբարից և Ազատ գետից: Ոռոգումը իրականացվում է ինչպես հողային հունով, այնպես էլ կիսաքանդ բետոնե խողովակներով: Հեռանկարում նախատեսվում է ոռոգման ցանցի վերանորոգում:

Ոռոգման համակարգում նախատեսվող կարևոր միջոցառումներն են.

- 1) Ոռոգման համակարգերի պահպանում, շահագործում և գույքագրում:
- 2) Ջրօգտագործողների համակարգի վերջնական ձևավորում, ինքնահոս ջրամատակարարման ընդլայնում, էներգետիկ ծախսերի կրճատում, ջուր մատակարարող և օգտագործող փոխհարաբերությունների բարելավում:
- 3) Ջրամբարների կառուցում, համայնքում ոռոգման ջրերի վերաբերյալ առկա խնդիրների վերանայում և լուծման ժամանակացույցի կազմում:

Գողթ համայնքի էներգամատակարարումը իրականացնում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղը: Համայնքում գործում են 9 էլ. ենթակայաններ, որոնք սպասարկում են Գողթ համայնքը: Համայնքի էլեկտրամատակարարման սխեման կազմում է 1մլն.կվտ/ժամ/տարի տրանսֆորմատորային հզորություն (N1-400կվտ, N2-250 կվտ): Համաձայն մեթոդակարգի, էլեկտրամագնիսական ճառագայթման վեր նշված աղբյուրները համարվում են սակավազոր և չեն դիտարկվում որպես մթնոլորտի աղտոտման աղբյուրներ: Հեռանկարում նախատեսվում է էլեկտրամատակարարման ցանցի 30%-ի չափով կառուցում, համակարգի արդիականացում, հին փայտյա հենասյուների փոխարինումը նորերով, այլընտրանքային էներգետիկայի կայացում և զարգացում: Համայնքում գործում են մի շարք փոքր ՀԷԿ-եր:

Գողթ համայնքը ներկայումս գազաֆիկացված է: Համայնքը միջին ճնշման գազ ստանում է Գառնի համայնքից եկող Փ100մ/6 գազատարից: Համայնքի գազամատակարարման համակարգը երկաստիճան է: Միջին ճնշման գազատարից գազը



մտնում է գազաբաշխիչ կայան, որտեղ ստացվող ցածր ճնշման գազը խողովակներով մատակարարվում է բնակչությանը կենցաղային և ջեռուցման կարիքների բավարարման համար: Բնակչության աճին զուգընթաց կկառուցվեն նոր թաղամասեր և նոր գազամատակարարման ցանց:

Անհատական բնակելի տների ջեռուցումը նախատեսվում է իրականացնել անհատական բնակարանային կաթսաներով կամ գազի վառարաններով, իսկ տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման կարիքներն ապահովելու համար բնակարաններում տեղադրվում են գազասալիկներ և գազի ջրատաքացուցիչներ:

Կուլտուր-կենցաղային, հասարակական շենքերի ջեռուցումը և տաք ջրամատակարարումը կարող է իրականացվել կենտրոնացված եղանակով կցակառույց, ինչպես նաև գոյություն ունեցող կաթսայատներից:

Համայնքի հեռանկարային զարգացման համար նախատեսված տները կունենան տեղական ջեռուցում և տաք ջրամատակարարում:

Ներկա դրությամբ Գողթ համայնքում գոյություն ունեն ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներ (զբոսայգի, զբոսապուրակներ, պուրակներ և այլն): Հեռանկարում՝ համայնքի բնակավայրի կենտրոնում համայնքապետարանի տարածքից 0.03հա տարածք տրամադրել զբոսայգի կառուցելու համար:

Գողթ համայնքը ունի երկու գերեզմանատուն, որից մեկը գործող է՝ 2.76հա մակերեսով գտնվում է բնակավայրի հյուսիսային հատվածում և առաջիկա 15 տարիների ընթացքում այդ տարածքը բավարար է բնակչության աճի համաձայն: Երկրորդ գերեզմանոցը 0.53հա մակերեսով գտնվում է համայնքի բնակավայրի հարավային հատվածում, համայնքապետարանի հարակից տարածքում, որը հիմնվել է 9-20դդ. և ներգրավված է պատմամշակութային հուշարձանների ցանկում: Առաջարկվում է գործող գերեզմանոցը պարիսպապատել և շրջապատել դեկորատիվ ծառերով:

Գողթ համայնքի աղբավայրի տարածքը գտնվում է համայնքի հյուսիս-արևելյան հատվածում: Այդ աղբավայրը հիմնականում տրամադրված է արտադրական թափոնների նպատակով, ուստի կենցաղային աղբը տեղափոխվում է Գառնի աղբավայր: Գողթ համայնքը աղբահանության կազմակերպման համար ունի պայմանագիր Գառնի համայնքի հետ: Հեռանկարում նախատեսվում է համայնքում տեղադրել աղբի համար նախատեսված աղբարկղեր:

Ներկայումս իրականացման փուլում է Կոտայքի մարզի աղբահանության կառավարման ծրագիրը, որի շրջանակներում Հրազդանում կկառուցվի նոր ժամանակակից աղբավայր:

Ծրագիրը նախատեսում է բնակավայրերում կազմակերպել փոքր տարողությամբ աղբահավաք վայրեր, որտեղից պարբերաբար աղբը կտեղափոխվի Հրազդան քաղաքի աղբավայր:

Գողթ համայնքի մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը, ջեռուցման ժամանակահատվածում օգտագործվող վառարանները, արդյունաբերական ձեռնարկությունները, սակայն դրանց արտանետումների աղտոտվածության մակարդակները չեն գերազանցում սահմանված նորմերը:



Գողթի համայնքապետարանում տեղի են ունեցել <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված հանրային քննարկումները, որոնց ընթացքում հնչած առաջարկությունները հաշվի են առնվել նախագծի լրամշակումների ընթացքում և հանրության կողմից հավանություն է արժանացել: Հատկապես լուծված են կեղտաջրերի մաքրման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի նվազեցման և կանաչապատման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Ընդհանուր առմամբ հեռանկարային զարգացման ընթացքում գլխավոր հատկապես նախատեսված միջոցառումների արդյունքում Գողթ համայնքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջ

Հիմնադրությամբ փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է << օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել << բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Մեծ Մասրենի>> ՍՊԸ կողմից ներկայացված << Կոտայքի մարզի Գողթ համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատկապես շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Հ.Մեսրոպյան